



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

13 նոյեմբերի 2014թ.

Նայաստրանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ն. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Վ. Նովիաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Արա Վարդանյանի անհատական դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
քաղաքացի Արա Վարդանյանը դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՆՏ
քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 1058-րդ հոդվածի 1-ին
մասով սահմանված նորմերը իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնա-
բանմամբ եւ կիրառմամբ, ճանաչել ՆՏ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 8-րդ, 18-19-րդ
հոդվածներով, 22-րդ հոդվածի 7-րդ մասով, 83.5-րդ հոդվածի 2-րդ կետով (42-րդ հոդվածի
2-րդ մասի 2-րդ նախադասության եւ 45-րդ հոդվածի հետ համակարգային եւ
բովանդակային կապի համակցությամբ), 91-րդ հոդվածով սահմանված նորմերի
պահանջներին հակասող եւ անվավեր»:

Սահմանադրական դատարանի դատական կազմը 2014թ. նոյեմբերի 3-ին իր՝
ՍԴԴԿՈ/1-20 որոշմամբ քննելով հիշյալ դիմումով գործը քննության ընդունելու մասին

հարցը՝ մերժել էր այն՝ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, գրնելով, որ դիմողը խախտել է հիշյալ նորմով նախատեսված՝ սահմանադրական դատարան դիմելու 6-ամսյա ժամկետը:

Ս.թ. նոյեմբերի 11-ին սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումով դիմողը փաստարկներ է ներկայացրել այն մասին, որ ԵԱԶԴ/0136/02/10 քաղաքացիական գործով ՆՏ վճռաբեկ դատարանի կայացրած 2014 թվականի մարտի 26-ի ԵԱԶԴ/0136/02/10 որոշումը դիմողն ստացել է 2014 թվականի ապրիլի 12-ին, հետեւաբար՝ պահպանել է սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով սահմանված վերջնաժամկետը:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի, այդ թվում՝ փոստային ծրարների վրա առկա փոստային համապարասխան ծառայությունների կողմից դրված կնիքների ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գրնում է, որ վերոհիշյալ անհատական դիմումի հիման վրա գործը սահմանադրական դատարանում պետք է քննության ընդունվի մասնակիորեն՝ հետեւյալ պարճառաբանությամբ.

ա) ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի վերաբերյալ Դատական կազմը գրնում է, որ դիմողը չի ներկայացրել ՆՏ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ պարշած իրավական հիմնավորումներ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: ՆՏ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հարկանիշով: Մինչդեռ դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ որևէ հիմնավորում:

Բացի դրանից, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ

վիճարկվող իրավադրույթների հակասահմանադրականության միջև պարզառահեղանակաբար կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՆՏ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Դատական կազմը նաև գտնում է, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետևանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց: Այսինքն՝ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Ղեկավարվելով ՆՏ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

բ) ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ

Վերոնշյալ նորմի սահմանադրականության վերաբերյալ դիմումում եւ կից նյութերում առկա փաստարկների ու հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չեն դիմումի՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասով գործի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է իր իրավունքների դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Քաղաքացի Արա Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

13 նոյեմբերի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/1-21